



ԳԱՆԱՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ ԴԻՕԵՍԵ ԱՐՄԵՆԻԵՆ ԴՍ ԿԱՆԱԴԱ

ԿԱՆՆԹԵՂ

ՍՐ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՏԻՅՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ



GANTEGH BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINEUR DE MOTRÉAL

ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

ԿԻՐԱԿԻ, 11 Օգոստոս 2019

123

DIMANCHE, 11 Août 2019



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
Website: www.saintgregory.ca / E.mail: saintgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Գ. ԿԻՐԱԿԻ ԶԿՆԻ ՎԱՐԴԱՎԱՌԻ

3 ème DIMANCHE APRÈS LA TRANSFIGURATION

Աստուածաշունչի Ընթերցումներ

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ

ԳՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ

(13.11-14.5)

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ

ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

(2.1-12)

Les lectures de la Bible d'aujourd'hui

1 CORINTHIENS 13.11-14.5

MARC 2.1-12

Պատարագիչ եւ քարոզիչ` / Celebrant

ԱՐԺ. Տ. ԴԱԻԻԹ ՔԶՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Հոգեւոր Հովիւ

Célébrant:

RÉV. PÈRE DAVID MARGARYAN

Prêtre Paroissial

Առաւօտեան Ժամերգութիւն ժամը 9:30-ին

Office Matines à 9h30

Ս. Պատարագ ժամը 10:30-ին

La Sainte Messe à 10h30

Հոգեհանգիստ ժամը 12:00-ին

Requiem à 12h00

DIACRES – ACOLYTES

Chef de chœur: M. Sarkis Barsemian

Organiste: Mme Houry Bedrossian

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

**LES LECTURES
DE DIMANCHE**



**THE SUNDAY
READINGS**

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԿՈՐՆԹՍՅՆԵՐՈՒՆ ԳՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ 13.11-14.5

11Երբ մանուկ էի, մանուկի պես կը խօսեի, մանուկի պես կը մտածեի, մանուկի կարծիք ունեի. բայց երբ այր մարդ եղայ, մանկական բաները մէկ կողմ դրի: 12Հիմա կը տեսնեք հայելիի մը մէջէն՝ աղօտ կերպով, բայց այն ատեն՝ պիտի տեսնեք երես առ երես: Հիմա ես մասամբ կը ճանչնամ, բայց այն ատեն պիտի ճանչնամ այնպէս՝ ինչպէս ես ճանչցուած եմ: 13Իսկ հիմա սա՛ր երեքը կը մնան՝ հաւատքը, յոյսը, սէրը. բայց սէ՛րն է ատոնց մեծագոյնը: 14.1Սիրո՛յ հետամուտ եղէք, ու նախանձախնդի՛ր եղէք հոգեւոր պարգեւներու, մանաւանդ՝ մարգարեանալու: 2Որովհետեւ ան որ կը խօսի անձանօթ լեզուով, կը խօսի ո՛չ թէ մարդոց՝ հապա Աստուծոյ, քանի որ ո՛չ մէկը կը հասկնայ զինք. սակայն ան խորհուրդներ կ'արտայայտէ հոգիով: 3Իսկ ան որ կը մարգարեանայ, կը խօսի մարդոց՝ շինութիւն, յորդոր եւ սփոփանք տալու: 4Ա՛ն որ անձանօթ լեզուով կը խօսի՝ ինքզինք կը շինէ. բայց ան որ կը մարգարեանայ՝ եկեղեցի՛ն կը շինէ: 5Կ'ուզեմ որ դուք բոլորդ լեզուներ խօսիք, մանաւանդ՝ մարգարեանաք. որովհետեւ ան որ կը մարգարեանայ, անելի մեծ է քան ան որ լեզուներ կը խօսի, բացի եթէ ինք թարգմանէ՝ որպէսզի եկեղեցին շինութիւն ստանայ:

ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 2.1-12

1Դարձեալ Կափառնայում մտաւ քանի մը օր ետք, եւ լսուեցաւ թէ ան տան մը մէջ է: 2Իսկոյն շատ մարդիկ հաւաքուեցան, այնքան՝ որ ա՛լ տեղ չկար, ո՛չ իսկ դրան շուրջ, ու կը քարոզէր անոնց Աստուծոյ խօսքը:

3Մարդիկ եկան իրեն՝ բերելով չորս հոգիով փոխադրուած անդամաւոյծ մը. 4բայց տեսնելով որ բազմութենէն չէին կրնար մօտենալ անոր, քակեցին տան տանիքը՝ ուր կը գտնուէր Յիսուս, ու ծակ մը բանալով՝ վար իջեցուցին մահիճը, որուն վրայ պառկած էր անդամաւոյծը: 5Յիսուս տեսնելով անոնց հաւատքը՝ ըսաւ անդամաւոյծին. «Որդեակ, մեղքերդ ներուած են քեզի»: 6Զանի մը դպիրներ, որ հոն նստած էին, իրենց սիրտերուն մէջ կը մտածէին. 7«Ինչո՞ւ այս մարդը կ'ըսէ այսպիսի հայիոյութիւններ. ո՞վ կրնայ մեղքերը ներել՝ բացի Աստուծմէ՞»: 8Յիսուս իսկոյն ըմբռնելով իր հոգիին մէջ՝ որ անոնք այդպէս կը մտածեն իրենք իրենց մէջ, ըսաւ անոնց. «Ինչո՞ւ այդպէս կը մտածէք ձեր սիրտերուն մէջ: 9Ո՞րը ակելի դիւրին է, “մեղքերդ ներուած են քեզի” ըսե՞լը անդամաւոյծին, թէ՛ “ոտքի՛ ելիր, ա՛ն մահիճդ ու քալէ՛” ըսելը: 10Բայց որպէսզի գիտնաք թէ մարդու Որդին իշխանութիւն ունի երկրի վրայ մեղքերը ներելու, (ըսաւ անդամաւոյծին.) 11“Քեզի՛ կ'ըսեմ. “Ոտքի՛ ելիր, ա՛ն մահիճդ ու գնա՛ տունդ”»: 12Ան ալ իսկոյն ոտքի ելաւ, եւ առնելով իր մահիճը՝ դուրս ելաւ բոլորին առջեւէն, այնպէս որ բոլորը զմայլեցան, փառաբանեցին Աստուծո՛ւ ըսին. «Այսպիսի բան ամենեւին տեսած չէինք»:

1 Corinthiens 13.11-14.5

11Quand j'étais enfant, je parlais comme un enfant, je jugeais comme un enfant, je pensais comme un enfant; mais quand je suis devenu homme, j'ai aboli ce qui était de l'enfance. 12Car nous voyons maintenant par un miroir obscurément, mais alors nous verrons face à face; maintenant je connais en partie, mais alors je connaîtrai selon que j'ai été aussi connu. 13Or maintenant ces trois choses demeurent, la foi, l'espérance, et la charité; mais la plus excellente de ces [vertus] c'est la charité.

14.1Recherchez la charité. Désirez avec ardeur les dons spirituels, mais surtout de prophétiser. 2Parce que celui qui parle une Langue [inconnue], ne parle point aux hommes, mais à Dieu, car personne ne l'entend, et les mystères qu'il prononce ne sont que pour lui. 3Mais celui qui prophétise,

édifie, exhorte et console les hommes [qui l'entendent].
4Celui qui parle une Langue [inconnue], s'édifie lui-même; mais celui qui prophétise, édifie l'Eglise. 5Je désire bien que vous parliez tous [diverses] Langues, mais beaucoup plus que vous prophétisiez, car celui qui prophétise est plus grand que celui qui parle [diverses] Langues, si ce n'est qu'il interprète, afin que l'Eglise en reçoive de l'édification.

Marc 2.1-12

1Quelques jours après il revint à Capernaüm; et on ouït dire qu'il était dans la maison. 2Et aussitôt il s'y assembla beaucoup de gens, tellement que l'espace même d'auprès de la porte ne les pouvait contenir, et il leur annonçait la parole. 3Et [quelques-uns] vinrent à lui, portant un paralytique, qui était soutenu par quatre personnes. 4Mais parce qu'ils ne pouvaient approcher de lui à cause de la foule, ils découvrirent le toit du lieu où il était, et l'ayant percé, ils descendirent le petit lit dans lequel le paralytique était couché. 5Et Jésus ayant vu leur foi, dit au paralytique : mon fils, tes péchés te sont pardonnés. 6Et quelques Scribes qui étaient là assis, raisonnaient ainsi en eux-mêmes : 7Pourquoi celui-ci prononce-t-il ainsi des blasphèmes? qui est-ce qui peut pardonner les péchés, que Dieu seul? 8Et Jésus ayant aussitôt connu par son esprit qu'ils raisonnaient ainsi en eux-mêmes, il leur dit : pourquoi faites-vous ces raisonnements dans vos cœurs? 9Car lequel est le plus aisé, ou de dire au paralytique : tes péchés te sont pardonnés; ou de lui dire : lève-toi, et charge ton petit lit, et marche? 10Mais afin que vous sachiez que le Fils de l'homme a le pouvoir sur la terre de pardonner les péchés, il dit au paralytique : 11Je te dis : lève-toi, et charge ton petit lit, et t'en va en ta maison. 12Et il se leva aussitôt, et ayant chargé son petit lit, il sortit en la présence de tous; de sorte qu'ils en furent tous étonnés, et ils glorifièrent Dieu, en disant : nous ne vîmes jamais une telle chose.



Հոգևոր Հովիւի Պատգամը

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամեն:
«Որդեա՛կ, թողեալ լիցինք քեզ մեղք քո»
(Մարկոս 2-5)

Միբելի քրիստոսակիր քոյրեր եւ եղբայրներ, այսօրուան աւետարանիչը մեզի կը ներկայացնէ Կափառնայի անդամալոյծին բժշկութիւնը: Քանի մը օրեր ետք, միայն տեղացիները կը լսեն թէ Յիսուս քաղաք վերադարձած է: Եւ ահա քաղաքին մէջ կը սկսի իրարանցում, ոմանք կը հետեւին Անոր լրտեսութեան համար, ոմանք ալ բժշկուելու ակնկալութեամբ: Ժամանելէն քանի մը օրեր ետք, Յիսուս արդէն կը խօսէր եւ կը վարդապետէր համախմբեալ մարդոց եւ շարք մը դպիրներ, փարիսեցիներ եւ օրէնսգետներ ալ կ'ունկողրէին : Ժողովուրդը լեփ-լեցուն էր, ափ ի բերան եւ խոնուած էին մինչեւ դուռը : Միով բանիւ մուտքն ու ելքը գոցուած էին, նոյնիսկ բժշկութեան համար եկողները մնացած էին յուսահատ : Գալիլեայէն, մինչեւ անգամ Երուսաղէմէն մարդիկ կային: Բոլորն ալ համոզուած էին, որ թէ Յիսուսի միջոցաւ յայտնուած աստուածային զօրութեան համար անհնար բան չկայ:

Բժշկութիւն ակնկալողներուն մէջն էր նաեւ անդամալոյծ մը, որուն չորս հոգի պատգարակով բերած էին, անշուշտ կ'ուզէին Յիսուսին առջեւ դնել, սակայն ներս մտնելու ճար չկար: Ինչպէս կ'երեւէր թէ՛ անդամալոյծը մեծ կամքի տէր էր եւ թէ՛ չորս ուղեկցողները՝ երբեք չընկրկող անձեր էին :

Այո՛, տանիքէն ներս մտնելու առակը անոնք իրականութիւն դարձուցին, երդիկ լուսամուտէն կամ լուսանցոյց երդ կոչուածէն: Անշուշտ այդ անձնաւորութիւնը ունեւոր կամ նշանաւոր մէկը պիտի ըլլար, քանի որ իրեն հետ ունէր չորս հաւատարիմ անձեր:

Անոնք ալ հանելով երդիկին երկու փայտերը կրցան իջեցնել եւ Քրիստոսի ոտքերուն առջեւ դնել անդամալոյծը: Այս նորօրինակ միջադէպը ամենուն մօտ հիացմունք յառաջացուց: Յիսուս Քրիստոս նոյնպէս կ'ազդուի հիւանդին անյողորդդ եւ աննկուն կամքէն եւ կը համոզուի անոր հաւատքին անսասանութեան մէջ:

Մեր Տէր Յիսուս Քրիստոս գիտէր թէ ինչո՞ւ եւ ինչպէ՞ս անդամալուծութեան ախտը հասած էր անոր, այսինքն որուն համար նախ կը կամենայ վերացնել հիւանդութեան սկզբնապատճառը, ուստի քաղցրօրէն կ'ըսէ, «Որդեակ, թողեալ լիցին քեզ մեղք քո»: Տեղւոյն վրայ ներկայ գտնուող օրէնսգէտները, դպիրները եւ փարիսեցիները կը սպասէին, որ մեր Տէր Յիսուս Քրիստոս խօսքով ոտքի պիտի կեցնէ: Հրաշքներուն ականատես կ'ըլլային, սակայն մեղքերու թողութեան օրինակին առաջին անգամ ըլլալով էր, որ ներկայ գտնուեցան: Ուստի այլայլուեցան, գայթակղուեցան եւ սկսան մտովի խորհիլ, թէ ուրկէ՞ լոյս աշխարհ ելաւ մեղքերու թողութիւնը: Չէ, որ այդ միայն Աստուծոյ մենաշնորհն է եւ ոչ ոք չի կրնար սեփականացնել, անձնականացնել: Յիսուս ո՞վ է, որ կը հայտոյէ, ո՞վ է, որ կը հաւակնի աստուածութեան: Այո՛, այդպէս կը խորհէին անոնք, սակայն բարձրաձայնել չէին համարձակեր:

Եւ Յիսուս կանխեց հրեական մտածելակերպը եւ ըսաւ.

«Կերելի, որ շփոթեցաք, քանի որ կը կարծէք թէ չեմ կրնար մեղքերուն թողութիւն տալ, կարողութիւն չունի մ: Արդ, ո՞ր մէկն է աւելի մեծ եւ աւելի դիւրին, մեղքերը ներել, թէ անդամալոյծին ոտքի կանգնեցնելը: Քանի որ մեղքեր ներելը զգացումներու ետեւէն իյնալով չըլլար եւ ըսելն ալ դիւրին է, մինչդեռ անդամալոյծին ոտքի հանելը աւելի մեծ բան է, քանզի շօշափելի եւ տեսանելի արդիւնք պիտի ունենայ:

Արդ, եթէ ոտքի կանգնեցնեմ անդամալոյծը, պէտք է ընդունիք, որ մեղքերը ներելու խօսքս ալ իրական է ու գործնական»:

Եւ աւարտելուն պէս Յիսուս կը դառնայ եւ հրամայական շեշտով կ'ըսէ. «Քեզի կ'ըսեմ, վեր կաց մահիճդ վերցուր եւ տունդ գնա»: Եւ զայն ուժ ստանալով իր սրունքներուն եւ միւս անդամներուն վրայ կը կանգնի եւ կը վերցնէ իր մահիճը: Ուրախ եւ զուարթ հոգիով մաքրուած եւ մարմինով բժշկուած կ'երթայ դէպի տուն, այն ճանապարհով, որ սկիզբը չկրցաւ մտնել:

Չորս հոգիները այդ ճարպիկ քայլին դիմելով կը փաստեն անգամ մը եւս, որ Քրիստոսի աստուածային զօրութեան կը հաւատային իրենց քրիստոնէական հաւատքին ողջ ուժգնութեամբը:

Քրիստոս տեսաւ անոնց՝ չորսին հաւատքը եւ ներեց անդամալոյծին մեղքերը: Աւետարանիչը չ'ըսեր, թէ անդամալոյծը խօսեցաւ կամ խնդրեց, Յիսուս տեսաւ, որ օրէնսագետները շօշափելին կ'ուզեն, ըսաւ, որ թերեւս աւելի դիւրին է մէկուն ֆիզիքական բժշկութիւն պարգեւելը քան հոգեկան ախտերէն մաքրագարդուիլը, սակայն եթէ դուք ձեր մտածելակերպին համաձայն այդ կ'ուզէք, ուրեմն կ'ընեմ, որպէսզի օրէնսագետներուդ լեզուով եւ մտածումով հաստատուի անգամ մը եւս յաչս ամենեցուն իմ աստուածային զօրութիւնը:

Միբեյիներ, շատ կարելոր հանգամանքի մը մասին կ'ուզեմ խօսիլ, որ այս պատմութեան մէջ Քրիստոս ներեց մեղքերը տեսնելով չորս անձերուն հաւատքը, մենք չենք գիտեր եթէ երբեւէ հիւանդը կրնար գրուցել, սակայն յայտնի է մնացեալ չորսին հաւատքը: Արդ, այս խորհուրդ եւ յորդոր մըն է բոլորիս համար, որ իրարու համար պիտի աղօթենք, այն մարդիկ որոնք սուրբերու բարեխօսութեան հանդէպ ինչ կասկած որ ունին, թող պահ մը կանգ առնեն եւ նային այս օրինակին : Նաեւ այս լաւ դաս մըն է մեզի համար, ինչպէս որ անսասան հաւատքով չորսը դիմեցին Քրիստոսին, այնպէս ալ մենք մեր ընկերներուն, հարազատ-բարեկամներուն, հայրենի երկրին ու զինուորներուն, անոնց մայրերուն համար, ծանօթ կամ անծանօթին համար ուղղուած մեր սրտանց, հաւատքով ու անկասկած կերպով դիմել Քրիստոսին, դիմել Տիրոջը անվարան եւ վստահ կերպով, ակնկալելով Տիրոջ կողմէ ունկնդրուիլը եւ պատասխանուիլը:

Միբեյիներ, անդամալոյծը եկած էր ֆիզիքական առողջութիւն փնտռելու համար, սակայն անոր Տէրը հոգեւոր մաքրութիւն ալ պարգեւեց: Այդ կը նշանակէ, որ մենք երբ որ անբիծ հաւատքով Աստուծմէ կը խնդրենք եւ կը յարատեւենք մեր իսկ խնդրանքին մէջ, ապա Աստուած մեզի Իր պարգեւներուն բազմապատիկը կու տայ:

Միբեյիներ, Քրիստոս եկաւ նախ եւ առաջ մեր հոգիները բժշկելու եւ եթէ մենք կ'ուզենք իրապէս ժառանգել Երկնից Արքայութիւնը, ապա կարելոր չէ մեր մարմիններուն բժշկուած երթալը այս աշխարհէն, ան կարելոր է այս երկիրին համար: Այլ հոգեւորապէս բժշկուած հոգիներով եւ սիրտերով է որ մենք պիտի ներկայանանք Տիրոջ, այլապէս եթէ մարմինը առողջ է, բայց հոգին ապականած, փճացած, ի նչ օգուտ: Եթէ երբեւէ մենք կոտորուած ձիրք ունինք, փճացած հոգի ունինք, չի յուսահատինք, չըսենք թէ չենք կրնար ձերբազատուիլ այս մեղքերէն, այս մոլութիւններէն:

Ամենքս ալ հիւանդ ենք սիրելիներ, առանց բացառութեան, ամենքս ալ անդամալուծուած ենք մեղքով, իւրաքանչիւր մարդ իր հոգիի ներսը գիտէ թէ ի՞նչ է իր մեղքը, ի՞նչն է որ իրեն կ'անդամալուծէ՝ Աստուծոյ կատարելապէս մօտենալու համար:

Տէրը կ'ըսէ. «Ինծի եկէք, բոլոր հոգնածներդ ու ծանրաբեռնուածներդ եւ Ես հանգիստ պիտի տամ ձեզի»:
Ահաւասիկ մեր Տիրոջը կանչը, 2000 տարիներէ ի վեր կը կանչէ եւ կը շարունակէ կանչել մինչեւ աշխարհի վախճանը, հետեւաբար սիրելիներ, այսօր իրական եւ իսկական պահն է, որ մենք անդրադառնանք մեր անդամալոյծ հոգիներուն, իւրաքանչիւրս մեծ թէ փոքր: Դաւիթ մարգարէն կ'ըսէ. «Մայրս ինծի մեղքով ծնաւ»: Սակայն Աստուած տուած է երկրորդ պատեհութիւնն ու առիթը, որ երկրորդ անգամ հոգեւոր ծնունդ ունենանք՝ կամաւորապէս: Սիրելիներ ակամայ ծնած ենք՝ կամաւորապէս, սակայն Երկնից Արքայութեան դռները բաց են, որպէսզի երկրորդ անգամ ծնինք՝ հոգեւորապէս: Չոջանք մեր վատ ընթացքին, վատ նպատակներուն եւ գործած սխալներուն համար եւ դառնանք դէպի Աստուած, խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ դարձի գանք եւ ընդունինք մեր մէջ Յիսուսին որպէս Փրկիչ եւ Աստուած: Ահաւասիկ, սիրելիներ այսօրուան պատգամը, որ այս անդամալոյծին ֆիզիքական վիճակը ճիշդ պատկերն ու արտացոլանքն է մեր հոգեւոր կեանքին եւ ապրումներուն: Աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Տէրը իւրաքանչիւրիս պարզելէ իմաստութիւն եւ ամէն մէկուս արժանաբար ըսէ. «Որդեակ, թողեալ լիցին քեզ մեղք քո»:
Թող Երկնաւոր Հօր ողորմութիւնը, Յիսուս Քրիստոսի սէրը եւ Սուրբ Հոգւոյն հաղորդութիւնը մեր բոլորին վրայ ըլլան, ամէն:

Օրհնութեամբ՝

Տէր Դաւիթ քահանայ Մարգարեան

Շաբաթ, 10 Օգոստոս 2019

***Եփեսոսի Ա. Ժողովի 200 Հայրապետներու
Ցիշտասկութեան Օր***

Եփեսոսի Ժողովը տեղի ունեցած է 431 թուականին
Թեոդոսիոս

Փոքր կայսրի օրերուն, 200 հայրերու մասնակցութեամբ,
որոնք հաւաքուած էին՝ քննելու Կ.

Պոլսոյ Պատրիարք Նեստորի սխալ
ուսմունքը: Այս ուսմունքին

համաձայն՝ Յիսուս Քրիստոսի մէջ
գոյութիւն ունէին 2 անկախ, մէկը
միւսին հակադիր բնութիւններ՝
աստուածային եւ մարդկային:



Նեստորը կը քարոզէր, որ Քրիստոս

ծնած է որպէս հասարակ մարդ, ապա Աստուածութիւնը
բնակած է անոր անձին մէջ, հետեւաբար Ս. Կոյս Մարիամը

ոչ թէ Աստուածածին է, այլ մարդածին: Եփեսոսի Ժողովը կը
դատապարտէ Նեստորի վարդապետութիւնը եւ կ'ընդունի

Ս. Կիրեղ Ալեքսանդրացիին ուսմունքը որպէս ուղղափառ
դաւանութիւն, որուն համաձայն Քրիստոսի աստուածային

եւ մարդկային բնութիւնները գոյութիւն չունին առանձին-
առանձին, այլ միաւորուած են անշփոթ, անխառն կերպով.

մէկ Տէր, մէկ Յիսուս, մէկ դէմք եւ միացեալ

աստուածամարդկային բնութիւն: Ս. Մարիամը ոչ թէ

մարդածին է, այլ Աստուածածին, քանի որ ան ծնեցուց

Աստուծոյ Որդին: Կը հռչակուի Ս. Կիրեղ Ալեքսանդրացիի

«Մի է բնութիւն քանիսն մարմնացելոյ» բանաձեւը: Հայ

Եկեղեցին մասնակցած չէ այս տիեզերական ժողովին,

սակայն նախորդ տիեզերական ժողովներուն հետ

ընդունած է անոր որոշումներն ու տիեզերական

հեղինակութիւնը:

Օգոստոսի 11, 2019թ.

***Բարեկենդան Սուրբ Աստուածածնի
Պահոց***



Պահքի սկիզբն է, որ կը նախորդէ Հայ Առաքելական եկեղեցւոյ տաղաւար տօներէն եւ Սուրբ Աստուածածնին նուիրուած տօներէն մեկուն, այսինքն՝ Սուրբ Աստուածածնի վերափոխման: Այս պահքը կը տեւէ Երկուշաբթի օրէն մինչեւ Շաբաթ:

Saturday, August 10, 2019

***Commemoration Day of 200 Pontiffs participating
in the Ecumenical Council of Ephesus***

The Ecumenical Council of Ephesus was convened in 431 A. D., during the reign of the King Theodosius Small. 200 Pontiffs participated in the Council with the goal to criticize the false teaching of Nestorius, Patriarch of Constantinople. According to his teaching there were two independent - divine and human natures in Christ, contrasting each other. Nestorius preached that Christ was born as a simple man and only later Divinity was settled in His Person, and therefore, the Holy Virgin Mary was not Godmother, but the mother of a simple man.

The Ecumenical Council of Ephesus condemns the teaching of Nestorius and adopts the teaching of St. Cyril of Alexandria as an orthodox teaching, according to which the divine and human natures of Christ do not exist separately, but are united unmixedly, without confusion - one Lord, one Jesus, one face and one united divine and human nature. St. Mary is not the mother of a simple man, but she is Godmother as she gave birth to the Son of God. So, the formulation of St. Cyril of Alexandria: "One is the nature of the Incarnate Word of God" was adopted. The Armenian Church has not participated in that Ecumenical

Council but has adopted its resolutions and ecumenical authority together with the previous Ecumenical Councils.

Sunday, August 11, 2019

Eve of the Fast of St. Mary, Holy Godmother

This is the Sunday preceding the week prior to the Feast of the Assumption of St. Mary, Holy Godmother, one of the major feasts of Armenian Apostolic Church and one of the seven feasts dedicated to St. Mary. The fasting period lasts from Monday to Friday.

**ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՕՆԱՅՈՅՑ
ՅԱՌԱՋԻԿԱՅ ՇԱԲՈՒՒՆ**

Օգոստոս - Août

- 12, Երկուշաբթի – Ա. օր Աստուածածնի պահոց
Lundi 12 – 1^{er} jour du jeûne de l'Assomption
- 13, Երեքշաբթի – Բ. օր Աստուածածնի պահոց
Mardi 13 – 2^{ème} jour du jeûne de l'Assomption
- 14, Չորեքշաբթի – Գ. օր Աստուածածնի պահոց
Mercredi 14 – 3^{ème} jour du jeûne de l'Assomption
- 15, Հինգշաբթի – Դ. օր Աստուածածնի պահոց
Jeudi 15 – 4^{ème} jour du jeûne de l'Assomption
- 16, Ուրբաթ – Ե. օր Աստուածածնի պահոց
Vendredi 16 – 5^{ème} jour du jeûne de l'Assomption
- 17, Շաբաթ – Տօն Շողակաթի Սրբոյ Էջմիածնի՝ ըստ
տեպլեան Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին
Samedi 17– Fete de Choghagat de St Etchmiadzine selon
la vision de St Grégoire l'Illuminateur

ՇԱԲԹՈՒԱՅ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆԸ

«Եկեք մեր խաչերը սիրով կրենք. եկեք տեսնենք, թե արդեօք անոնք ուրիշներուն համար բեռ չեն դառնար, բայց եկեք օգնենք ուրիշներուն իրենցինք կրելու»:

Ս. Յովհաննէս Պօսկոյ

«Մի հպարտանաք, երբ ձեզի գովաբանեն: Մի վշտանաք, երբ ձեզի կը դատապարտեն: Թող ձեզի միայն հետաքրքրէ այն, թէ Աստուած ինչ կարծիք ունի ձեր մասին...»

Հայր Յովէլ Յանակուպուլոս

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Մեր սիրելի հաւատացեալներուն ուշադրութեան կը յանձնենք թէ յետայսու Յուդարկաւորութիւններու ընթացքին հանգուցեալի հարազատներէն կը խնդրուի նկատի ունենալ, թէ արարողութեան ընթացքին որեւէ սրտի խօսք կամ դամբանական կարդացուելէն առաջ, հարկ է նախօրօք կապ հաստատել Եկեղեցոյ գրասենեակ (514) 279-3066, այլապէս ենթական իրաւունք չունենար որեւէ խօսք առնելու եկեղեցոյ մէջ, առանց Հոգևոր Հովիւի գիտակցութեան եւ արտօնութեան:

Շնորհակալութիւն ձեր ողջախոհութեան համար:
Եկեղեցոյ գրասենեակ

ATTENTION

we would like to ask to our beloved faithful to take note that in terms of funeral services the family members before making any heartfelt speech or eulogy, it is necessary to contact the Church Office at (514) 279-3066 or otherwise will not be possible to make any speech in the church without the consciousness and permission of the Parish Priest.

Thank you for your understanding.
Church Office:



ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔԸ

ԱՂՕԹՔ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԱՄԱՐ

Տէր Աստուած, կը խնդրենք, տուր Հայոց ազգիս Քու Աստուածային խաղաղութիւնդ, առաքէ Քու Սուրբ Հոգիդ, որպէսզի ողջ ժողովուրդիս սիրտին մէջ հոսի սիրոյ եւ միաբանութեան շնորհքը: Բազումողորմ Տէր, զթա ցրուած հօտիդ եւ մի թողեր տանջուին անմիաբան հոգիով: Տէր Աստուած մեր, ամէն ժամ զօրավիզ եւ օգնական եղիր ազգիս՝ տան եւ ճանապարհին, ծովուն եւ ցամաքին մէջ, առնելու եւ տալու, վարելու եւ վաստակելու եւ յաջողեցուր բոլոր բարի գործերը:

Տէր Աստուած մեր, շնորհէ՛ նաեւ ազգիս առաջնորդներուն բարեպաշտութիւն եւ իրար հանդէպ սէր, աղքատ տնանկներուն հանդէպ գթութիւն, ինամածութեան եւ ողջ հասարակութեան հանդէպ օժանդակութիւն:

Նաեւ, Ողորմած Աստուած, հեռացուր՝ ցատումը եւ պատուհասը ողջ ազգիս եւ գաւառներուն, ինչպէս նաեւ բոլոր տուներէն եւ ողջ հայոց աշխարհէն:

Փրկէ՛ չար պատահարներէն եւ ձախորդութիւններէն, հիւանդութիւններէն, սովէն, սուրէն, տարածամ մահէն եւ այլեայլ վշտաբեր պատահարներէն, որոնք մեր վրան կու գան մեր մեղքերուն պատճառով:

Յոյց տուր բոլորին, որ Դուն ես Տէրը եւ Աստուածը եւ Քեզի յուսացողներուն ի սպառ չես թողեր, որուն համար ամէն ինչի մէջ եւ բոլորին կողմէ Քեզի փառ՝ք, պատիւ եւ երկրպագութիւն անբաժանելի եւ միասնական Սուրբ Երրորդութեանդ.

այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

ՀՈԳԵՀԱՆԳՍԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME



SERVICE FOR THE
REPOSE OF SOUL



ԿԻՐԱԿԻ, 11 Օգոստոս 2019

Տիկ. Յասմիկ Պոսնոյեանի եւ զաւակներուն,
Տ. եւ Տիկ. Գրիգոր Տեմիրճեանի եւ զաւակներուն,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ ծնողաց եւ մեծ ծնողաց՝

ՍԱՆԴՈՒԻՒՏ ՍԻՄՈՆԵԱՆԻ
(SANTOUKHT SIMONIAN)

Մահուան 50-րդ տարելիցին առիթով
Եւ

ՅԱՐՈՒԹԻԻՆ ՍԻՄՈՆԵԱՆԻ
(HAROUTYOUN SIMONIAN)

Մահուան 35-րդ տարելիցին առիթով



Տօղրամաճեան եւ Մաղաքեան ընտանիքներու,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ մօր եւ մեծ մօր՝

ՌՕԶԱ ՎԱՐԴՈՒԷԻ
ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆԻ
(ROZA VARTOUIHIE DORAMAJIAN)

Իրենց սիրեցեալ եղբօր՝
ՆՈՒՊԱՐ ՕՆՆԻԿ

ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆԻ
(NOUBAR ONNIG DORAMAJIAN)
Եւ Իրենց սիրեցեալ քրոջ՝

ՄԱՆՈՒՇԱԿ ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆԻ
(MANOUSHAG DORAMAJIAN)
Հոգիներուն ի հանգիստ



Տօրթ. Ճուլիա Միսիսեանի,
Տ. եւ Տիկ. Մարինա եւ Ճօն Բէրէի եւ զաւակներուն,
Տ. եւ Տիկ. Մարկարիթ եւ Վինս Սօրենայի,
Ինչպէս նաեւ՝ համայն Մաթեոսեան ընտանիքի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն իրենց
սիրեցեալ ամուսնոյն, հօր, մեծ հօր եւ հարազատին՝

ԱԻԵՏԻՍ ՄԻՍԻՍԵԱՆԻ
(AVRDIS MISSISSIAN)

Մահուան 15-րդ տարելիցին առիթով
Ինչպէս նաեւ՝

Իրենց սիրեցեալ ծնողաց եւ մեծ ծնողաց՝
ԱՐՏԱԻԱԶԴ ՄԱԹԷՈՍԵԱՆԻ
(ARDAVAZT MATEOSIAN)

ԵՒ

ԵՎՏՈՎԻԱՅ ՊԵՐՈՎԱՅԻ
(YEVDOGIA BEROVA)
Հոգիներուն ի հանգիստ



Տիկ. Սօնիա Պարոնեանի եւ զաւակներուն՝ Ալեքսիայի,
Քէյվըրնի եւ Գարինայի,
Տ. եւ Տիկ. Տօմինիքօ եւ Նորա Գեմբիթէլլի եւ զաւկին՝
Ճէմայի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն իրենց
սիրեցեալ հօր եւ մեծ հօր՝

ԳԷՈՐԳ ՊԱՐՈՆԵԱՆԻ
(KEVORK BARONIAN)
Մահուան 10-րդ տարելիցին առիթով



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր
Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral



ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ
ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ
ԵՒ
ՀՈԳԵՒՈՐ ՉՐՈՅՑ

Մեր սիրելի հաւատացեալներուն
ուշադրութեան կը յանձնենք թէ մեր
Հոգեւոր Չրոյցները
ամառնային շրջանին առժամաբար
կը դադրեցնենք մինչեւ
Սեպտեմբեր:

ÉTUDES BIBLIQUES
ET
CAUSERIES SPIRITUELLES

Nous avisons à nos fidèles que
nous arrêterons temporairement nos
soirées d'études
Bibliques et Causeries Spirituelles
pour la saison d'été jusqu'à
du mois de septembre.

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax:

(514)279-8008/ stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



**ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՄԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ Ի ՄՈՆՏՐԵԱԼ**

ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

ՏՕՆ

ՎԵՐԱՓՈՒՄԱՆ Ա. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

**ԿԻՐԱԿԻ, 18 ՕԳՈՍՏՈՍ 2019
ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՄԲ. ԳԱՏԱՐԱԳ
ԵՒ ԽԱՂՈՂՈՐՀՆԷՔ**

առաւօտեան ժամը 10:30-ին

Գառարագիչ՝

**ԱՐԺ. Տ. ԴԱԻԹ ԶԸՆՅ. ՍԱՐԳՍԵԱՆ
Հոգևոր Հովի**

Յաւարտ Ա. Գառարագի

«Խորովածի Տպասարկութիւն»

նախաձեռնութեամբ՝

Միակն խորհուրդի

Մասնակցութեամբ՝

Գոլասնայ Միութեան հաստատարիմ հայորդեաց

«Անուշեղէնի «Կանաչ» կազմակերպութեամբ՝

Տիկնանց Յանձնախումբին

Եկեղեցայ պարտեզին մէջ:

Մտարի Կուր՝ \$20



ASSUMPTION OF HOLY VIRGIN

SUNDAY, AUGUST 18, 2019

**DIVINE LITURGY
AND BLESSING OF GRAPES**

at 10:30 am

Celebrant

REV. FR. DAVID MARGARYAN, Parish Priest

At the end of the Blessing of the Grape,
the service of B.B.Q. organized by the Parish Council
with participation of Bolsahay Cultural Center

Pastry sales,
by assistant ladies from the church.



Entry \$ 20

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

Website: www.saintgregory.ca / Email saintgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



KARAOKE ԸՆԴՈՒՔԷ

Կազմակերպութեամբ՝

«ԿՈՄԻՏԱՍ»

Դպրաց Դաս / Երգչախումբի

Ուրբաթ, 23 Օգոստոս 2019

Երեկոյեան ժամը 6:00-ին

«Մարի Մանուկեան» սրահ

Friday, August 23, 2019 at 6:00 pm

“Marie Manoogian” Hall

- Երգեցողութիւն/Singing
- Կերուխում /
Burger/Potato/Salad/Soft Drinks

Քրակիրուած են բոլոր
Երիտասարդները
Don't Miss

Տեղերու ապահովման հեռաձայնել Եկեղեցւոյ
Գրասենեակ - For reservation please call to the Church
office at: (514)279-3066

\$20 Entry

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax:
(514) 279-8008 / stgregorychurch@gmail.com





ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՍՔ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ Ի ՄՈՆՏՐԵԱԼ
ST. GREGORY THE ILLUMINATOR
ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

ԿԻՐԱԿԱՄՏԻՑ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ



Միրով կը յայտնենք, թե Շաբաթ 27 Յուլիս 2019-ի երեկոյեան ժամը՝ 5-ին, Երեկոյեան (Կիրակամտից) Ժամերգութիւն պիտի կատարուի Մոնթրէալի Սք. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցոյ մէջ:

Այսու կը հրաւիրենք մեր հաւատացելները ներկայ գտնուելու հոգեպարար այս արարողութեան:

Օրհնութեամբ՝
Տ. Դաւիթ Քինյ. Մարգարեան, Հոգեւոր Հովիւ

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
Website: www.saintgregory.ca / E.mail: saintgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

ԵԿԷՔ ՊԱՅԾԱՌԱՑՆԵՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ



Եկեղեցոյ պայծառութեան եւ առաքելութեան յարատեւման նախանձախնդիր մեր սիրելի հաւատացեալներ,
Միրով կը յայտնենք, թէ մեր եկեղեցին կարիքն ունի հետեւեալ իրերուն.-

- Արձաթեալ Սկիի
- Օդորակիչի անհրաժեշտ սարքաւորման (Air Conditioner)
- Ս. Սեղանի ոսկեգոյն ասեղնագործ ծածկոց
- Հոգեւորականաց շուրջառներ եւ հողաթափեր
- Սկիիի ծածկոցներ եւ Աւետարանի բռնիչ
- Մեծ Պահքի կամ Աւագ շաբթուան յարդարանք (սեղան եւ ծածկոց)
- Յիսուս Մանկան մսուր
- Եկեղեցոյ տօնաձառ
- Ճրագալոյցի եւ Տեառնդատաջի համար նախատեսուած դուրսի մուրք
- Ջրօրինէքի Սափոր
- Ս. Խորանի 2 մեծ վարագոյր՝ կարմիր եւ սեւ

Արդ, անոնք որոնք կը փափաքին իրենց սրտաբուխ նուիրատուութեամբ մասնակից դառնալ եկեղեցոյ սուրբ առաքելութեան, հաճին կապ պահել եկեղեցոյ հովիւին կամ քարտուղարութեան հետ (514) 279- 3066:

«Այս երկրի մէջ ցանկ՝ քու հացդ, որպէսզի երկնքի մէջ զայն հարիւրով պտտույ տուած գտնես»:

«Հոգեւոր հայելի»

Օրհնութեամբ եւ շնորհակալութեամբ՝
Հոգեւոր Հովիւ եւ Ծխական Խորհուրդ



ՌԻԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ

PILGRIMAGE TO PÈLERINAGE EN


ARMENIA



ARMÉNIE

02.10.2019

15.10.2019




Հայաստանեայց Առաքելական Մուրթ
եկեղեցու Գրանատահայոց Թեմը
Օրհնութեամբ

Գրանատահայոց Թեմի Առաջնորդ,
Գերջ Տ. Աբգար եպիսկոպոս Յովակիմեանի՝
կր կազմակերպէ 14 օրեայ Ռէտազնացութիւն
դէպի Մայր Հայաստան:
Մանրամանութիւններու համար հաճեցէք
հեռաձայնել կամ գրել Առաջնորդարան:




The Armenian Diocese of Canada,
with blessings of
His Grace Bishop Abgar Hovakimyan, Primate
is organizing a 14-day pilgrimage to Armenia.
For details, please contact the Diocese.



Le Diocèse arménien du Canada
organise un pèlerinage de 14 jours en Arménie,
avec bénédictions du
Primat, Sa Grâce Mgr Abgar Hovakimyan.
Pour plus de détails, veuillez contacter le
Diocèse.



USD \$1,400 PER PERSON IN DOUBLE ROOM
SINGLE SUPPLEMENT \$400



Price includes: Hotel accommodation with Breakfast,
14 Lunches, 1 Dinner, Entrance fees to the sites,
Transportation, Professional Guide
Not included: Visa fee, Airfare, Insurance.



FIND AND JOIN

the «Armenian Diocese of Canada»
on Facebook to receive and
share news about the Diocese.



WATCH

a documentary about the Pilgrimage. Find
the «Armenian Diocese of
Canada» Channel on YouTube.

